ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-26043-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Լիլիթ Ղազանչյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Արսեն Հարությունյանի, Դավիթ Մելքոնյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Վարդիկյանի, Ռուբեն Հակոբյանի և Պավել Գյուլումյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-26043-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Պալատի գլխավոր հաշվապահի 05.02.2026թ. տեղեկանքի համաձայն՝ **Փաստաբանի** անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմում է 365.000 (**երեք հարյուր վաթսունհինգ հազար**) **ՀՀ դրամ**, **որից վերջին** 18 **ամիսների համար՝** 2024**թ**. **հունիսից** 2025**թ**. **նոյեմբեր ամիսը ներառյալ**, **կազմում է** 90.000 **ՀՀ դրամ**: **Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը**:

Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 140-Ա/ԿԳ-26043 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26043-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ « խիստ նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման համար:

Դիմողը Որոշման դեմ 07.08.2026թ. բողոք է ներկայացրել:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-ԿԳ-26043-2-Ա որոշման էությունը.</u>**

Հանձնաժողովը Որոշմամբ նշել է հետևյալը.

«(…) Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում ամրագրվել են անդամավճար չվճարելու համար փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժի ընտրության համար որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում կոնկրետ կարգապահական գործով Հանձնաժողովը կարող է կիրառել ավելի մեղմ կամ ավելի խիստ կարգապահական տույժ՝ «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տույժի տեսակ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարի վճարման պարտականության չկատարման վարքագիծը, որպես կարգապահական խախտում, գնահատվում է այնքան խիստ, որ դրա համար ուղղակիորեն նախատեսված է «արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի տեսակի նշանակման հնարավորությունը, ինչպես նաև այն, որ Օրենքով և Կանոնագրքով հստակ սահմանված են այն պարտադիր պայմանները, որոնց համապատասխանության դեպքում նման վարքագիծ դրսևորած փաստաբանի նկատմամբ կարող են նշանակվել «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակները, Հանձնաժողովը գտնում է, որ փաստացի նույն վարքագիծը դրսևորած՝ անդամավճարը չվճարած, սակայն հետագայում՝ մինչև տվյալ գործով Հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ, կուտակված պարտքը մարած փաստաբանի նկատմամբ ամենամեղմ պատասխանատվության միջոց կիրառելը կդիտարկվի անհամաչափ:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ Փաստաբանն ըստ էության գոյացրել է ավելի քան 18 ամսվա պարտք (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը), ինչպես նաև չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:»

Փաստաբանի կողմից անդամավճարի երկարատև չվճարումը, որը սույն դեպքում կազմում է ավելի քան 6 տարի՝ խաթարում է Պալատի բնականոն գործունեությունը և ֆինանսական կանխատեսելիությունը:

Հանձնաժողովը, հաշվի առնելով նախկինում միևնույն փաստական հիմքերով գործերով իր արտահայտած դիրքորոշումը, ինչպես նաև անդամավճարներ չվճարելու հարցում միասնական մոտեցում ցուցաբերելու նկատառումից ելնելով, գտնում է, որ այն փաստաբանը, որը չի վճարել մինչև 20 ամսվա անդամավճարը, **առաջին անգամ** Կանոնագրքի 9.1.3 ենթակետի հնարավորությունից օգտվելու դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը), ենթակա է կարգապահական պատասխանատվության **<u>նկատողության</u>** ձևով, իսկ 20 ամիս և ավելի անդամավճարի պարտք ունեցող փաստաբանի դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը)՝ կիրառվում է **<u>խիստ նկատողությունը</u>**:

Նշված տարբերակումը հիմնված է օբյեկտիվ, կանխատեսելի և ստուգելի չափանիշի՝ անդամավճարի վճարման պարտականության չկատարման տևողության վրա: Անդամավճարի վճարման պարտականության առավել երկարատև չկատարումն արտահայտում է կարգապահական խախտման առավել տևական բնույթ և, մյուս հավասար պայմաններում, պահանջում է առավել խիստ կարգապահական արձագանք: Ընդ որում, պարտքի ամբողջական մարումը չի վերացնում նախկինում արդեն իսկ կատարված կարգապահական խախտումը, քանի որ փաստաբանը սահմանված ժամկետներում չի կատարել անդամավճար վճարելու իր պարտականությունը: Պարտքի ամբողջական մարումն իրավական նշանակություն է ստանում կիրառելի կարգապահական տույժի տեսակի ընտրության հարցում՝ Կանոնագրքի 9.1.3 ենթակետի ուժով բացառելով «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի կիրառումը և պայմանավորելով ընտրությունը «նկատողություն» ու «խիստ նկատողություն» տույժերի միջև:

Ամփոփելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Փաստաբանն ամբողջությամբ վճարել է Պալատի նախագահի 140-Ա/ԿԳ-26043 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը՝ Հանձնաժողովը Փաստաբանի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն» տույժի տեսակը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Փաստաբանը 07.08.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Որոշումը անհիմն է և ապօրինի:

Փաստաբանը նշել է, որ 2026թ. փետրվարին դիմել է Պալատ խնդրելով տրամադրել ժամանակ անդամավճարի պարտքը վճարելու համար և մինչև 24.07.2026թ.

ամբողջությամբ վճարել է պարտքը:

Փաստաբանը հայտնել է, որ ենթարկվել է պատասխանատվություն, փաստացի որևէ պարտավորություն չունենալով:

Ըստ Փաստաբանի, Որոշման մեջ նշվել է, որ արատավորությունը չի կատարվել շուրջ 6 տարին, ինչը հանգեցրել է Պալատի բնականոն գործունեության խաթարման:

Փաստաբանը նշել է, որ վճարել է պարտավորությունը ամբողջությամբ սակայն Որոշմամբ արձանագրվել է, որ 20 և ավել ամիս անդամավճար չի վճարվել: Ավելին, Որոշման մեջ նշվել է, որ 6 տարի անդամավճար չի վճարել Փաստաբանի կողմից, սակայն որևէ ծանուցում այդ ժամանակահատվածում չի ուղարկվել:

Փաստաբանի համար անհասկանալի է թե ՀՀ ո՞ր օրենքով է նշված, որ պարտավորություն չունեցող անձին կարելի է ենթարկել պատասխանատվության:

Ըստ Փաստաբանի անհասկանալի է թե իր կողմից չվճարված անդամավճարը ինչպես է խաթարել Պալատի գործունեությունը:

Ելնելով վերոգրյալից, Փաստաբանը գտել, որ Որոշումը անհիմն է, ապօրինի և ենթակա է անվավեր ճանաչման:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմել է **365.000 (երեք հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:** *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 05.02.2026թ. տրամադրված տեղեկանքով:*

2) Փաստաբանն ամբողջությամբ մարել է Պալատի նախագահի 23.02.2026թ. թիվ 140-Ա/ԿԳ-26043 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը և 24.07.2026թ. դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի 24.07.2026թ. տեղեկանքով:*

5. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում****:*

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39.10 **հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

*2) **խիստ նկատողություն**.*

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 **հոդվածի** 2-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

***Օրենքի** 39.10-**րդ հոդվածի** 5-**րդ մասի** 3-**րդ կետի համաձայն**՝* *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

3) առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Կանոնագրքի 9.1.3 ենթակետով ևս նախատեսված է նույն հատուկ իրավակարգավորումը, ընդ որում՝ պարտքի ամբողջական մարման դեպքում փաստաբանի նկատմամբ կիրառելի են «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» կարգապահական տույժերը:

Վերոգրյալ կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը փաստաբանի անդամավճար վճարելու պարտականության չկատարումը չի դիտարկել որպես զուտ քաղաքացիաիրավական կամ ֆինանսական պարտավորության չկատարում: Այն փաստաբանի կարգավիճակից բխող ինքնուրույն մասնագիտական պարտականություն է, որի խախտման համար օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն, իսկ որոշակի պայմանների առկայության դեպքում՝ նաև փաստաբանի նկատմամբ կիրառելի ամենախիստ կարգապահական տույժերից մեկի՝ արտոնագրի գործողության դադարեցման հնարավորությունը:

Հետևաբար, անդամավճարի պարտավորության հետագա կատարումը և գոյացած պարտքի մարումը պետք է տարանջատել մինչև այդ արդեն իսկ թույլ տրված կարգապահական խախտումից:

Սույն գործով պատասխանատվության հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ Փաստաբանը սահմանված ժամկետներում չի կատարել անդամավճար վճարելու՝ օրենքով և Պալատի համապատասխան իրավական ակտերով սահմանված պարտականությունը: Այդ պատճառով այն հանգամանքը, որ մինչև Հանձնաժողովի որոշման կայացումը Փաստաբանը մարել է գոյացած պարտքը և որոշման կայացման օրվա դրությամբ այլևս անդամավճարի գծով պարտք չի ունեցել, չի կարող վերացնել այն փաստը, որ համապատասխան անդամավճարները սահմանված ժամկետներում չեն վճարվել: Այլ կերպ՝ պարտքի մարումը վերացնում է չկատարված դրամական պարտավորությունը, սակայն չի վերացնում մինչև այդ արդեն իսկ դրսևորված վարքագծի՝ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու փաստը և դրա կարգապահական իրավական գնահատականը: Ուստի Խորհուրդը հիմնավոր չի համարում Փաստաբանի այն փաստարկը, ըստ որի՝ Հանձնաժողովի որոշման կայացման պահին որևէ պարտավորություն չունենալու պայմաններում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը հակասում է օրենքին:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանի կողմից պարտքն ամբողջությամբ մարելու հանգամանքը էական նշանակություն ունի կարգապահական տույժի ընտրության հարցում: Օրենքը հենց այդ հանգամանքի հաշվառմամբ է տարբերակում փաստաբանի նկատմամբ կիրառելի կարգապահական տույժերը: Մասնավորապես, եթե առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող և հերթական ամսվա անդամավճարը չվճարած փաստաբանը մինչև Հանձնաժողովի որոշման կայացումը պարտքն ամբողջությամբ չի մարում, օրենքը թույլ է տալիս նրա նկատմամբ կիրառել նաև արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժը: Մինչդեռ պարտքի ամբողջական մարման և որոշման կայացման օրվա դրությամբ որևէ պարտք չունենալու դեպքում այդ տույժի կիրառումը բացառվում է, և կիրառելի են «նկատողություն» կամ «խիստ նկատողություն»

կարգապահական տույժերը: Այսպիսով, օրենսդիրն ինքն է տարանջատել, մի կողմից, արդեն իսկ կատարված կարգապահական խախտումը և, մյուս կողմից, խախտումից հետո փաստաբանի վարքագիծը՝ պարտքի ամբողջական մարումը, վերջինիս տալով նշանակություն ոչ թե պատասխանատվության հիմքի վերացման, այլ կիրառելի կարգապահական տույժի որոշման հարցում:

Սույն գործով հաստատված է, որ 05.02.2026 թվականի դրությամբ Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմել է 365.000 ՀՀ դրամ, որից վերջին տասնութ ամիսների համար՝ 2024 թվականի հունիսից մինչև 2025 թվականի նոյեմբերը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ, և Փաստաբանը չի վճարել նաև հերթական ամսվա անդամավճարը: Միաժամանակ, մինչև Հանձնաժողովի 24.07.2026 թվականի որոշման կայացումը Փաստաբանն ամբողջությամբ մարել է Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման պահի դրությամբ առկա անդամավճարի պարտքը և Հանձնաժողովի որոշման կայացման օրվա դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չի ունեցել: Հետևաբար, Հանձնաժողովը իրավաչափորեն հաշվի է առել Փաստաբանի կողմից պարտքի ամբողջական մարումը և նրա նկատմամբ չի կիրառել առավել խիստ՝ արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժը:

Միաժամանակ, պարտքի ամբողջական մարման հանգամանքից ինքնին չի հետևում, որ Փաստաբանի նկատմամբ ենթակա էր կիրառման հնարավոր առավել մեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը: Կիրառելի տույժի ընտրության հարցում գնահատման ենթակա են նաև մինչև պարտքի մարումը դրսևորված վարքագծի բնույթը և տևողությունը: Սույն գործով 05.02.2026 թվականի դրությամբ Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմել է 365.000 ՀՀ դրամ, ինչը վկայում է անդամավճարի վճարման պարտականության տևական (շուրջ 6 տարի) չկատարման մասին, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից «խիստ նկատողություն» կարգապահական տույժի ընտրությունը Խորհուրդը գնահատում է կատարված խախտման բնույթին և տևողությանը համաչափ:

Միաժամանակ Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի պրևենտիվ նշանակությանը՝ այն կոչված է ապահովելու փաստաբանների բարեխիղճ վարքագիծի դրսևորման անդամավճարների վճարման պարտականության կատարման համատեքստում: Հարկ է ընդգծել, որ նշված նորմը նպատակ ունի ապահովվել բարեխիղճ վարքագիծ իրականացումը փաստաբանի կողմից: Հետևաբար անբարեխիղճ վարքագիծ դրսևորած վարքագծի գնահատականի բացակայությունը կստեղծի անհավասար մոտեցում բարեխիղճ վարքագիծ դրևորած փաստաբանների նկատմամաբ:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև անդամավճարի վճարման պարտականության նպատակին և նշանակությանը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է, ի թիվս այլնի, փաստաբանների անդամավճարներից, իսկ անդամավճարները մուծվում են Պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Հետևաբար, անդամավճարի վճարումը չի կարող դիտարկվել միայն որպես Պալատի և առանձին փաստաբանի միջև մասնավոր դրամական հարաբերություն, այլ անմիջականորեն առնչվում է Պալատի գործունեության գույքային ապահովմանը: Ընդ որում, այս հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ չէ յուրաքանչյուր կոնկրետ գործով ապացուցել, որ տվյալ փաստաբանի չվճարած գումարի պատճառով Պալատի այս կամ այն կոնկրետ գործառույթը փաստացի չի իրականացվել կամ խաթարվել է:

Ինչ վերաբերում է Փաստաբանի այն փաստարկին, որ պարտքի գոյացման ժամանակահատվածում իրեն համապատասխան ծանուցումներ չեն ուղարկվել՝ Խորհուրդը հարկ է համարում նշել, որ անդամավճար վճարելու պարտականությունը Փաստաբանի համար առաջանում է նրա մասնագիտական կարգավիճակից և օրենքով ու Պալատի իրավական ակտերով ուղղակիորեն սահմանված պահանջներից: Այդ պարտականության կատարման համար սահմանված են ինչպես անդամավճարի չափը, այնպես էլ վճարման պարբերականությունն ու ժամկետը: Ուստի այդ պարտականության կատարումը պայմանավորված չէ Պալատի կողմից փաստաբանին անհատական հիշեցում, պահանջ կամ այլ ծանուցում ուղարկելու հանգամանքի հետ:

Փաստաբանը, հանդիսանալով Պալատի անդամ, պարտավոր է ինքնուրույն հետևել իր կարգավիճակից բխող պարտականությունների կատարմանը, այդ թվում՝ սահմանված ժամկետներում անդամավճարների վճարմանը: Հետևաբար, անդամավճարի վերաբերյալ առանձին ծանուցում կամ հիշեցում չստանալու հանգամանքը չի վերացնում օրենքով արդեն իսկ սահմանված Փաստաբանի պարտականությունը:

Վերոգրյալի արդյունքում Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի կողմից վկայակոչված՝ պարտքի ամբողջական մարման, որոշման կայացման պահին պարտքի բացակայության, նախկինում պարտքի վերաբերյալ առանձին ծանուցումներ չստանալու և Պալատի գործունեության խաթարման վերաբերյալ փաստարկներից որևէ մեկը՝ առանձին կամ դրանց համակցությամբ, հիմք չի հանդիսանում Հանձնաժողովի որոշումը վերացնելու կամ կիրառված կարգապահական տույժն անհամաչափ գնահատելու համար:

Այսպիսով, Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից սույն գործով իրականացվել է պատշաճ քննություն, կիրառելի իրավական նորմերը ճիշտ են մեկնաբանվել և կիրառվել, Հանձնաժողովը հանգել է իրավաչափ եզրահանգումների և կայացրել իրավաչափ Որոշում, որը ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների

շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11**-րդ հոդվածի** 8**-րդ մասի** 1**-ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26**-րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը**՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի «Փաստաբան Արմեն Սերյոժայի Հարությունյանի (արտոնագիր՝ թիվ 557) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-26043-2-Ա որոշման դեմ Արմեն Հարությունյանի կողմից 07.08.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 24.07.2026 թվականի թիվ ԿԳ-26043-2-Ա որոշումը:
3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Լիլիթ Ղազանչյան**

07 սեպտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/24-Ա
ք. Երևան